ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

31 մայիսի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

72
(2922)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՆԱԽԿԻՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԸ ԿԱՌԵՐԵՍՎԵՆ



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Երեւան քաղաքի դատարանը ծանուցում է ուղարկելու ՀՅԴ բյուրոյի նախկին ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանին, ինչպես նաեւ Արցախի անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Վիտալի Բալասանյանին, որպեսզի վերջիններս ներկայանան դատարան ու հարցաքննվեն:

Իսկ ի՞նչ քրեական վարույթով նրանք պետք է ներկայանան դատարան:

2023 թվականին ArmLur.am-ը գրել էր, որ ԱԱԾ է հրավիրվել եւ հարցաքննվել ՀՅԴ բյուրոյի նախկին ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը: Մեզ հասած լուրերի համաձայն՝ նրան ԱԱԾ էին հրավիրել ու հարցաքննել Արցախի պաշտպանության բանակի պահեստազորի գնդապետ, Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմում անվտանգության վարչության պետի տեղակալ գնդապետ Նորայր Ասլանյանի դեմ հարուցված քրեական գործով:

Ի դեպ, մեզ հայտնի դարձավ, որ Հրանտ Մարգարյանի եւ կալանքի տակ գտնվող Արցախի գնդապետ Նորայր Ասլանյանի ցուցմունքների մեջ հակասություններ են եղել, ինչը ենթադրում էր, որ Հրանտ Մարգարյանն ու Նորայր Ասլանյանը պետք է առերեսվեին:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր նաեւ, որ նույն քրեական գործով Արցախի անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Վիտալի Բալասանյանը եւս հրավիրվել էր ՀՀ ազգային անվտանգության ծառայություն եւ հարցաքննվել էր:

Հավելենք, որ Ասլանյանին մեղադրում են հրազենի եւ ռազմամթերքի ենթադրյալ ապօրինի շրջանառության համար:



Ալեն Սիմոնյանը ԱԺ նախագահից դարձել է ՔՊ ժողովի նախագահ: Այսպիսով՝ Սիմոնյանն ինքն իր համար կարգադրություն է ստորագրել, համաձայն որի՝ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորությամբ՝ հունիսի 3-6-ը ԱԺ պատվիրակությունը, ավելի կոնկրետ՝ ՔՊ պատվիրակությունը կգործուղվի Լյուբլյանա՝ Սլովենիայի Հանրապետություն: Պատվիրակության կազմում ընդգրկված են բացառապես ՔՊ խմբակցության պատգամավորներ եւ ԱԺ նախագահի աշատակազմի աշխատակիցներ: Փաստաթղթում կարդում ենք, որ Ալեն Սիմոնյանի հետ Սլովենիա կմեկնեն ՔՊ խմբակցության պատգամավորներ Սարգիս Խանդանյանը, Լենա Նազարյանը, ԱԺ նախագահի խոսնակ Նելլի Ղուլյանը եւ այլ աշխատակիցներ: Այսպիսով՝ «ժողովրդավարական բաստիոնի» պառլամենտական երկրի Ազգային ժողովի պատվիրակության կազմում ընդդիմադիր որեւէ պատգամավոր չկա: Նշենք, որ ԱԺ կանոնակարգով հստակ որեւէ կարգավորում, իհարկե, չկա, թե ովքեր կամ քանի հոգի պետք է լինեն պատվիրակության կազմում. ԱԺ նախագահը ինքն է որոշում կազմը եւ ներկայացնում հրավիրող կողմին: Հաշվի առնելով, որ Ալեն Սիմոնյանը բացառապես իր թիմակիցներին է կազմում ընդգրկել, կարող ենք հստակ հետեւություն անել՝ նա ոչ թե ԱԺ նախագահն է, այլ ՔՊ ժողովի նախագահը:



«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ 1 տոննա կոկաինի գործով ԱԺ նախկին պատգամավորի ընկերության կալանավորված բոլոր աշխատակիցները ազատ են արձակվել: Նկատելի է, որ առեղծվածային պայմաններում Հայաստանում հայտնված 1 տոննա կոկաինի գործով ուշագրավ զարգացումներ են: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ քրեական գործով կալանավորվածների տնային կալանքի ժամկետը լրացել է, եւ աղմկահարույց գործով բոլոր կալանավորվածները ազատ են արձակվել: Ավելին՝ լրացել է նաեւ բացահայտման մեկ տարին, բայց նախաքննությունը շարունակվում է: Գրել էինք, որ դեռեւս մեկ տարի առաջ ԱԱԾ-ի կողմից մի շարք եվրոպական երկրներ նամակներ են ուղարկվել քննության շրջանակում կոկաինի ծագման, շրջանառության եւ այլ հարցերի վերաբերյալ, սակայն այդպես էլ պատասխանները չեն ստացվել կամ ցանկալի պատասխանները չկան: Ուժայինները մինչ օրս սպասում են կոնկրետ պատասխանների: Նշենք, որ այս գործով կալանավորվածները ԱԺ նախկին պատգամավոր Միհրան Պողոսյանին պատկանող ընկերության աշխատակիցներն էին, որոնցից մեկը կին է: Հիշեցնենք, որ ԱԱԾ-ն հայտնել էր «Մրգենի» ՍՊ ընկերության փաստացի սեփականատիրոջ՝ Միհրան Պողոսյանի, նույն ընկերության տնօրեն Լ.Ա-ի եւ պահեստապետ Ս.Գ.-ի նկատմամբ խմբի կազմում, նախնական համաձայնությամբ, առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց, մասնավորապես՝ 1 տոննա կոկաին ապօրինի իրացնելու եւ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցի մաքսանենգություն կատարելու համար՝ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին:

***Մանրամասները՝ ArmLur.am կայքում:***

Մեր օրերում զարմանալու թերեւս քիչ բան կա: Պարզվում է, սակայն, որ ՀՀ գործող իշխանությունների սիրելի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությունը գնում է ավելի հեռուն ու անցնում է երեւակայության հնարավոր բոլոր սահմանները: Ըստ էության, սենսացիոն բան կարող է տեղի ունենալ՝ Հայաստանի նորընծա չեմպիոն Երեւանի «Փյունիկը», որ խաղալու է Չեմպիոնների լիգայում ու վստահաբար հավաքելու է հազարավոր ֆուտբոլասերների, երկրից դուրս պիտի գա: Թիմի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանը հրապարակավ հայտնել է, որ կարող է խաղալ Թբիլիսիի «Դինամոյի» մարզադաշտում: Ըստ վերջինիս՝ պատճառը ֆեդերացիայի կողմից «Փյունիկ»-ի՝ միջազգային խաղերի համար Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտը չտրամադրելն է, դրա փոխարեն Երեւանից դուրս փոքր մարզադաշտեր առաջարկելը, ինչը հնարավորություն չի տա բազմահազար մարզասերների գալ խաղերը դիտելու: Գումարած սրան՝ «Փյունիկը» չունի նաեւ մարզվելու տեղ, դաշտեր, որոնք կունենա Վրաստանում: Փաստորեն, ֆեդերացիան ոչ միայն չի տրամադրում կենտրոնական մարզադաշտը, այլեւ զրկում է թիմին միջազգային խաղերից առաջ մարզվելու բավարար պայմաններից: Տարօրինակն այն է, որ երկար ժամանակ խորացող «Փյունիկ»-ՀՖՖ կոնֆլիկտն այսպիսով տեղափոխվում է բոլորովին այլ հարթություն, ու առաջացնելու է տասնյակ հազարավոր հայ երկրպագուների զայրույթը ու ներիշխանական լարված իրավիճակում կարող է պայթյունի տանել:

ԶՐՈՒՅՑ

# «ԱԶԳԱՅԻՆ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ է». ԱՌԱՔԵԼՅԱՆ

**Հայաստանի Հանրապետությունում վերջին օրերին բազմաթիվ քաղաքական զարգացումներ են տեղի ունեցել:**

Մայիսի 22-ին հայտնի դարձավ, որ Փարաքար խոշորացված համայնքի ղեկավարը հրաժարական է ներկայացրել:

2021 թվականին կայացած ՏԻՄ ընտրություններում ամենաշատ՝ 4637 քվե ստացած «Ապրելու երկիր» կուսակցությունն էլ Դավիթ Մինասյանին անվստահություն հայտնելու գործընթաց է սկսել:

Վաղը կկայանան Փարաքար համայնքի ղեկավարի նոր ընտրությունները:

«Ժողովուրդ» օրաթերթը թեմայի շուրջ զրուցել է «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մեսրոպ Առաքելյանի հետ: Անդրադարձել ենք նաեւ ոստիկանների պահվածքին, երբ նրանք խոչընդոտում էին կաթողիկոսի մուտքը Սարդարապատի հուշահամալիր:

**- Պարոն Առաքելյան, վերջերս Փարաքար համայնքի ղեկավարի պաշտոնի շուրջ աղմուկ բարձրացավ. իմպիչմենտ, հրաժարական, նոր ընտրություններ: Ի՞նչ նորություններ կան այս մասով:**

-Համայնքնի ղեկավարի նկատմամբ անվստահության գործընթացի մեկնարկից անմիջապես հետո համայնքի ղեկավարը հրաժարական տվեց եւ արդեն վաղը՝ օրենքով սահմանված կարգով, համայնքի ավագանու նիստի ընթացքում տեղի կունենա համայնքի ղեկավարի ընտրություն: Մեր թիմի ներսում ամեն բան կարգին է, հույս ունենք, որ մինչեւ վաղը նոր խոչընդոտներ չեն լինի եւ ընտրության արդյունքում մեր խմբակցության ղեկավար Վոլոդյա Գրիգորյանը կընտրվի համայնքի ղեկավար:

**-Համայնքի ղեկավարի ընտրության գործընթացի հետ կապված ճնշումներ կա՞ն:**

-Դե այդ գործընթացը հատուկ է իշխանություններին: Հիշենք, որ մեր թիմը նման գործընթացով անցավ Ալավերդիում մի քանի ամիս առաջ, այսօր էլ իշխանության ցանկացած քայլ աջակցվում է առաջին հերթին հենց ոստիկանական ուժերի կողմից, ինչի համար էլ համայնքում կան մտահոգություններ: Սակայն, հույս ունենք, որ որեւէ էական խոչընդոտ չի լինի:

-Պարոն Առաքելյան, ոչ պակաս լարված իրավիճակ է նաեւ Հանրապետության հրապարակում: Ինչպե՞ս կգնահատեք Ազգային ժողովի պատգամավորի նկատմամբ կարմիր բերետավորների կողմից բիրտ ուժի կիրառմանը:

Դա պարզապես խայտառակություն է: Ո՛չ միայն այդ դեպքը, այլ նաեւ մի քանի օր շարունակ քաղաքացիների նկատմամբ կիրառվող բիրտ ուժը, երբ խաղաղ ակցիաներ են իրականացվում: Բացի այդ, ցանկացած միջոցառում հանդիպում է ոստիկանական ուժերի մի քանի շերտերի: Ոստիկանության նման վարքագիծը միանշանակ անընդունելի է: Բագրատ սրբազանի առաջնորդած շարժման բոլոր գործողությունները խաղաղ են եւ այն հեքիաթները, որ Նիկոլ Փաշինյանը տարիներով պատմում է ժողովրդավարության մասին, քանդվում են, քանդվում է միֆը. ժողովրդավարության մասին խոսք անգամ լինել չի կարող: Նա թաքնվում է ոստիկանության ետեւում եւ այն հանում քաղաքացիների դեմ:

**-Պարոն Առաքելյան, կարմիր բերետավորները ուժ են կիրառում ո՛չ միայն պատգամավորների, ցուցարարների եւ լրագրողների նկատմամբ, այլ նաեւ տեսանք, թե ինչպես Սարդարապատում խոչընդոտեցին Վեհափառի մուտքը: Դա ինչպե՞ս կմեկնաբանեք: Ավանդույթ է, որ Վեհափառն ամեն տարի այցելում է Սարդարապատ:**

-Խոսքեր չկան նկարագրելու, պարզապես կարող եմ ասել, որ դա ազգային խայտառակություն է: Ես չեմ կարողանում պատկերացնել այդ հրամանի դեպքում, կամ այդ միջավայրում ոստիկանների գործողությունները:

Ենթադրենք՝ իրենց նման հրաման է տրվել, բայց մեկ անգամ նահանջից հետո ոստիկանության ղեկավարությունը նորից պատ է շարել տալիս: Դա պարզապես խայտառակություն է, որ իշխանությունն արդեն ազգային արժեքներին է սկսում վնաս հասցնել, եւ իրենց «ռոպեական» խնդիրները լուծելու համար պատմական լուրջ սխալներ են թույլ տալիս իրենց: Սա մեկ անգամ եւս ցույց է տալիս, որ այս իշխանությունը կտրված է ոչ միայն մեր ժողովրդից, այլ նաեւ ազգային, պատմական եւ եկեղեցական մեր արժեքներից: Վստահ եմ՝ հասարակական ճնշումը գնալով կմեծանա եւ իշխանափոխություն կլինի:

*Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ*

## ՍՐԲԱԶԱՆԻ ՈՒ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Երեկ առավոտից «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման առաջնորդ Բագրատ Սրբազանն ու աջակիցները շրջափակել էին Կառավարության շենքը:

Մերթընդմերթ տեղի ունեցող բախումներից զատ՝ Բագրատ Սրբազանը հասցնում էր նաեւ լրագրողների հարցերին պատասխանել:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Բագրատ Սրբազանն անդրադարձավ Նիկոլ Փաշինյանի հետ հնարավոր հանդիպմանը եւ վարչապետի այն դիտարկմանը, որ պետք է հերթագրվել, որպեսզի հնարավոր լինի հանդիպել վարչապետի հետ:

**-Երեկ Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով Ձեր առաջարկին, առ այն, որ հանդիպի Ձեզ հետ, նշեց, որ իր հետ հանդիպելու կարգ կա, եւ ցանկության դեպքում կարող են հերթագրվել:**

-Ասել եմ այդ մասին: Ասել եմ՝ «Այո կալանավայրում կհերթագրվենք, կգանք կայցելենք: Սա էլ է կալանավայր» (ձեռքով ցույց է տալիս Կառավարության շենքը. Խմբ.):

**-Սրբազան, իսկ անվստահություն հանձնելու հարցը դեռեւս օրակարգո՞ւմ է:**

-Ամեն հարց էլ օրակարգում է:

**-Բայց իշխանականներն ասում են՝ «մեր կողմից մեկ ու կես ձայն էլ չեն ստանա»:**

-Ո՞վ

*ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

## «ՓԱՇԻՆՅԱՆԸ ԱՅԼԵՎՍ ԱՆՎՏԱՆԳ է». ԴԱՆԻԵԼՅԱՆ

«Մենք դիմում ենք օկուպացիոն ռեժիմին, որպեսզի անվտանգ լինի, իրենց անվտանգությունն ապահովված է, մենք բերել ենք այստեղ ծառեր տնկենք ու ինքն այլեւս անվտանգության խնդիր չունի». - այս մասին Բուզանդ փողոցում հայտարարեց «Հայաստան» դաշինքի պատգամավոր Գառնիկ Դանիելյանը:

«Մենք միասին այստեղ ծառերը կտնկենք, մեր սիրելի ոստիկաններին կոչ կանենք, որպեսզի գնան զորանոցներ, զբաղվեն իրենց աշխատանքով, այլեւս Նիկոլ Փաշինյանի անվտանգությունն ապահովված է: Կաճեն այս ծառերը, լավ հով կլինի, այլեւս ոչ ոք իրենց երեսը չի տեսնի:

Այս ծառերը կտնկվեն նաեւ խորհրդարանում, Կառավարության շենքի մոտ: Կառավարության բոլոր մասնաշենքերում ուռենիներ կտնկվեն, ոստիկանության մոտ էլ ուռենիներ կտնկվեն, ԱԱԾ-ի մոտ էլ ուռենիներ կտնկվեն, եւ այդպես Հայաստանը կլինի անվտանգ երկիր: Նոր ծառեր, նոր անվտանգության քաղաքականություն: Այլեւս ՀՀ-ն ունի անվտանգության նոր հայեցակարգ, ՀՀ սահմաններն անառիկ են: Կիրանցում տնկվել են ծառեր, այնուհետեւ ծառատնկման աշխատանքները շարունակվում են Կառավարության շենքի մոտ: Այլեւս Նիկոլ Փաշինյանն անվտանգ է, քանի որ իրեն հսկում են հարյուրավոր ուռենիներ եւ բարդիներ», - նշեց նա:

Բագրատ Սրբազանը հավելեց՝ ծառ են տնկում, որ երեխաները ստախոսին չտեսնեն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՍԵՎ ԼՃԻ ՏԱՐԱԾՔ

Հայաստանում Եվրոպական միության դիտորդական առաքելության ղեկավար Մարկուս Ռիտերը մայիսի 29-ին այցելել է Սյունիքի մարզ եւ Գորիսում հանդիպել առաքելության անձնակազմի հետ:

Այս մասին նշվում է ԵՄ դիտորդական առաքելության X-ի միկրոբլոգում կատարված գրառման մեջ:

Հաղորդվում է նաեւ, որ առաքելության անձնակազմը եղել է նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանին գտնվող Սեւ լճի տարածքում:

«Առաքելության ղեկավար Մարկուս Ռիտերը նախօրեին Գորիսում հանդիպել է ԵՄ դիտորդական առաքելության անձնակազմի հետ: Թիմն այցելել է նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանին գտնվող Սեւ լիճ: Մինչ օրս ԵՄ դիտորդական առաքելությունն իրականացրել է ավելի քան 2300 պարեկություն», - նշվում է գրառման մեջ:

## ԲԱՅՐԱՄՈՎԸ՝ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը լավատես է Ադրբեջանի եւ Երեւանի միջեւ հարաբերությունների կարգավորման հարցում: Նա իր տրամադրություններն է կիսել Իսլամաբադում Պակիստանի ԱԳՆ ղեկավարի հետ համատեղ ասուլիսում:

Ինչպես եւ կարելի էր ակնկալել, դրական տրամադրությունների պատճառը Հայաստանի կողմից Տավուշի տարածքների վերջին միակողմանի հանձնումն է:

«Ադրբեջանա-հայկական սահմանի որոշակի հատվածի սահմանազատման եւ Հայաստանի կողմից երկար ժամանակ օկուպացված չորս գյուղերի՝ Ադրբեջանին վերադարձնելու մասին վերջերս ձեռք բերված պայմանավորվածությունը դրական ներդրում է նորմալացման գործընթացում», - ձեւակերպել է Բայրամովը:

Նախարարն ասել է, որ այսօրվա հանդիպմանը պակիստանցի գործընկերոջը ներկայացրել է տարածաշրջանում հետհակամարտային իրավիճակը: Նրա խոսքով՝ նա Պակիստանի ԱԳՆ ղեկավարին տեղեկացրել է նաեւ «Ադրբեջանի ազատագրված հողերի վերականգնման աշխատանքների մասին»: «Ես նշեցի, որ ականների երկարաժամկետ խնդիրը խոչընդոտում է մեր ջանքերը», - ասել է ադրբեջանցի նախարարը: Միաժամանակ նա նշել է, որ «Ադրբեջանը հավատարիմ է խաղաղ գործընթացին, եւ մենք հուսով ենք, որ դա դրական կլինի ընդհանուր տարածաշրջանի անվտանգության եւ բարգավաճման համար»:

Պակիստանի արտաքին գործերի նախարար Մուհամմադ Իսհակ Դարն իր հերթին ասել է, որ «Պակիստանը միշտ աջակցել է Ադրբեջանի ինքնիշխանությանը եւ տարածքային ամբողջականությանը»:

## ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՐԱԽԱՎՈՐԵԼ Է ԵԿԵՂԵՑԻՆ

Հայ Առաքելական եկեղեցու եւ հատկապես Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ ամենայն հայոց կաթողիկոսի եւ իրեն ուղեկցող հոգեւորականների նկատմամբ ոստիկանական ուժերի վերաբերմունքի վերաբերյալ արձագանքները բազմաթիվ են:

Այդ մասին հայտարարություն է տարածել «Թաթոյան հիմնադրամը»:

«Ներկայիս իշխանությունը Ոստիկանությանը օգտագործում է հանուն իր քաղաքական շահերի՝ թիրախավորելու համար Հայ Առաքելական Եկեղեցուն, հեղինակազրկում ոստիկանությանը ու դրանով իսկ թուլացնում պետության անվտանգությունը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին պետության անվտանգության կարեւոր բաղադրիչ է եւ ունի սահմանադրական կարգավիճակ: Այս մասին անգամ գրված է 2020թ. Ազգային անվտանգության ռազմավարության մեջ:

Իր հերթին Ոստիկանությունը պետության անվտանգությունն ու իրավակարգն ապահովող հենասյուներից է:

Նախ Եկեղեցու՝ իբրեւ կառույցի, հոգեւորականների թիրախավորումը թուլացնում է պետությունը, պառակտում հասարակությունը, հրահրում է ներքին թշնամանք թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում:

Այս արշավն ուղղակիորեն կազմակերպում եւ իրականացնում է այսօրվա իշխանությունը, քանի որ դա է պահանջում նրա քաղաքական շահը. դա իշխանություն, պաշտոններ պահպանելու միջոց է: Այսինքն՝ եկեղեցու նկատմամբ քաղաքական հաշվեհարդարի համար օգտագործվում է Ոստիկանությունը:

Այս ամենը հասարակության մեջ ոստիկանների նկատմամբ հասկանալիորեն առաջացնում է վրդովմունք, վիրավորանքներ ու բացասական վերաբերմունք առհասարակ, ինչն էլ իր հերթին Ոստիկանությանը դարձնում է ագրեսիվ նման վերաբերմունք դրսեւորող մարդկանց նկատմամբ:

Ընդ որում, այդ մարդկանց նկատմամբ ագրեսիվ վերաբերմունք է առաջանում նաեւ հասարակության այն մասի մոտ, որոնք իշխանության աջակից են, իշխանական քարոզի զոհ կամ այլ վերաբերմունք ունեն Առաքելական եկեղեցու նկատմամբ: Այս ամենը հղի է անկանխատեսելի վտանգավոր հետեւանքներով:

Ստացվում է՝ քաղաքական գործող իշխանությունը հանուն իր շահերի թուլացնում է մեր պետության անվտանգության ու ամրության հենասյուները՝ Ոստիկանությունն ու Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, ինչպես նաեւ հասարակության մեջ առաջանում անհանդուրժողականություն, հրահրում է ներքին թշնամանք՝ խորացնելով լարվածությունն ու պառակտումը»:

ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵՐ

# ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՔԱՅԼԵՐ ՉԵՆ ԱՐՎՈՒՄ

**Արդեն մի քանի օր է, ինչ ակտիվորեն քննարկվում է Լոռու եւ Տավուշի մարզերին պատուհասած աղետի պատճառները, որը գուցե եւ ամենեւին էլ բնական չէ, այլ արհեստածին:**

Հիշեցնենք ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆեյսբուքյան էջի ապրիլի 19-ի հայտարարությունը, որում մասնավորապես ասվում է՝ ««ՁորաՀԷԿ-ի» շահագործման ընթացքում էներգահամակարգի աշխատանքի խափանումներով պայմանավորված՝ առաջիկայում հնարավոր է կայանի կանգ, որն էլ իր հերթին մինչեւ օգոստոս ամիս կարող է հանգեցնել ջրի բացթողումների կայանի ջրամբարից:

Վերջինս կարող է Ձորագետ եւ Դեբեդ գետերի վարարումների պատճառ դառնալ:

Վտանգներից խուսափելու համար հորդորում ենք ափամերձ տարածքներում ցուցաբերել առավել զգոնություն»»:

Չնայած այս զգուշացումներին՝ Լոռու Մարզի մարզպետ Արամ Ղազարյանը երեկ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նշեց. - «Աղետն ու ապրիլի 19-ի հայտարարությունը իրար հետ փոխկապակցված չեն կարող լինել»:

Բացի բաց թողնված ջրի անթուլատրելի ծավալներից, շատ մասնագետներ պնդում են, որ աղետը կարող էր վրա հասնել նաեւ քարապայթեցման հետեւանքով եւ/կամ պատճառով: Բանն այն է, որ շատ վարորդներ հայտնել են, որ մինչ աղետի օրերը, իրենք ականատես են եղել քարերի պայթեցման եւ քարաթափման հենց հեղեղված ճամփեզրին: Այսինքն՝ պայթեցումները կարող էին նպաստել ջրերի վարարմանը, եւ ստացվում է, որ աղետի հիմքում գուցե մարդկային գործոնը կա:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ զրուցել է Լոռու մարզի մարզպետ Արամ Ղազարյանի հետ՝ հասկանալու համար՝ որքանով են իրական առաջ քաշված վարկածները:

Մարզպետը ArmLur.am-ի հետ զրույցում ասաց. - «Որտեղի՞ց նման տեղեկատվություն, շատ կներեք: Ես զարմանում եմ, էլի, այդ տեղեկությունները որտեղի՞ց են, ինչո՞ւ են անհիմն տեղեկություններ տարածում, ձեզ ու մեզ ծանրաբեռնում: Չկա նման բան»:

Մարզպետին նաեւ հարցրինք՝ ինչո՞ւ մարզպետարանը նախօրոք չի պատրաստվել աղետին, քանի որ հիդրոմետնեերը, այդ թվում՝ նաեւ Գագիկ Սուրենյանը, նախապես զգուշացրել էին, որ սպասվում են առատ անձրեւներ եւ կարկուտ:

Մարզպետ Արամ Ղազարյանը, մեր հարցին չպատասխանելով, հորդորեց հետեւել «Հայկական տեղեկատվական միասնական կենտրոնին», քանի որ ուղիղ եթերներով տալիս են բոլոր հարցերի պատասխանները:

«Մենք ունենք միասնական տեղեկատվական շտաբ, որտեղ ուղիղ եթերով համապատասխան տեղեկություն ենք տրամադրում: Խնդրում եմ՝ հետեւեք տեղեկատվական շտաբի տեղեկատվությանը, եւ հիմա, հարցերը որ բարձրաձայնում եք, ինձ դրանք տրվել են, եւ ես այդ հարցերին պատասխանել եմ», - ասաց մարզպետը:

«Ժողովուրդ» օրաթերթը նաեւ հետաքրքրվեց մարզի ղեկավարից՝ արդյո՞ք այս վարարման ռիսկը կանխատեսվել էր, եւ նախաձեռնվե՞լ են ինչ-որ աշխատանքներ, ինչին ի պատասխան՝ Ղազարյանն ասաց. - «Կանխատեսումները այնպիսին չէին եղել, որ կարող էր նման աղետ տեղի ունենալ: Դրա համար խնդրում եմ կանխատեսումների մասին նման հարցադրումներ անընդհատ չանել, որովհետեւ կանխատեսումներն ամեն օր լինում են, եւ բնականաբար բոլորն էլ քաջատեղյակ են, որ լիներ, հաստատ այլ գործառույթներ կիրականացվեին»:

Նշենք, որ աղետի պատճառով տուժել են շատ քաղաքացիներ, Լոռու եւ Տավուշի մարզերի մի շարք համայնքներ պաշտոնապես հայտարարվել են աղետի գոտիներ:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը մարզպետին հարցրեց, թե ով պետք է պատասխանատվություն կրի՝ ոչ պրոֆեսիոնալիզմի, չհաշվարկված քայլերի եւ կանխատեսումներին ընդառաջ կանխարգելիչ գործառույթներ չիրականացնելու համար:

«Հիմա, որ երկրաշարժ է լինում, պատասխանատվություն ո՞վ է կրում. տարերային աղետ է, եւ մենք ունենք մեր պետությունում համապատասխան մարմիններ, որոնք զբաղվում են այդ հարցերով, եւ եթե որեւիցե պաշտոնատար անձ, որն իր գործառույթները պատշաճ չի կատարում, բնականաբար, ըստ ընթացակարգի, կատարվում են համապատասխան գործընթացներ: Հիմա, եթե նմանատիպ անձինք կլինեն, որոնք պատասխանատվություն պետք է կրեն, մենք այդ մասին կտեղեկացնենք», - ասաց Ղազարյանը՝ ավարտելով զրույցը:

Այսպիսով՝ դատելով մարզային իշխանության ղեկավարի խոսքերից՝ Նիկոլ Փաշինյանի կառավարությունը պայքարում է աղետի հետեւանքների դեմ, սակայն պատճառների, կանխարգելիչ գործողությունների մասով ոչինչ չի արվում: Ասել է, թե՝ Լոռվա եւ Տավուշի մարզերի դիմակայունության հարցը չի էլ քննարկվում:

*ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ*

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ՀԱՅ–ԻՐԱՆԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է վարել ԻԻՀ ԱԳ նախարարի պարտականությունները կատարող Ալի Բաղերի Քանիի հետ:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունից տեղեկացրել են, որ ի հաջորդումն մայիսի 22-ին Թեհրան ՀՀ վարչապետի պատվիրակության այցի՝ ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը եւս մեկ անգամ իր գործընկերոջը ցավակցություն է հայտնել ԻԻՀ նախագահի, արտաքին գործերի նախարարի եւ նրանց ուղեկցող անձանց զոհվելու կապակցությամբ եւ արտահայտել իր զորակցությունը:

Ըստ աղբյուրի՝ զրուցակիցներն ընդգծել են, որ երկու երկրների եւ ժողովուրդների միջեւ բարիդրացիական կապերը խորն են ու ամուր եւ կկրեն շարունակական բնույթ: Արարատ Միրզոյանը եւ Ալի Բաղերի Քանին անդրադարձ են կատարել երկկողմ եւ տարածաշրջանային օրակարգին՝ շեշտելով մինչ այս ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման եւ ընթացիկ ծրագրերի շարունակականության ապահովման հարցում փոխադարձ պատրաստակամությունը:

Նշվում է, որ իրանական կողմն իր հերթին ցավակցություն եւ զորակցություն է արտահայտել ՀՀ Տավուշի եւ Լոռու մարզերում հեղեղումների հետեւանքով մարդկային զոհերի եւ վնասների կապակցությամբ:

## ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ Գ. ՓԱՅԼԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Թուրքիայում գործող ընդդիմադիր «Ժողովրդադեմոկրատական կուսակցության» (ԺԴԿ-HDP) անդամ նախկին 5 պատգամավորի նկատմամբ Անկարայի 22-րդ քրեաիրավական դատարան արդեն 2-րդ անգամ մեղադրական է ներկայացվել: Այդ պատգամավորների թվում է նաեւ ազգությամբ հայ Գարո Փայլանը, ում չհաջողվեց 2023-ի համապետական ընտրություններից հետո այլեւս Թուրքիայի խորհրդարանում տեղ զբաղեցնել:

Նշվում է, որ նրանք մեղադրվում են «Քոբանիի դեպքերի» շրջանակում «Պետության միասնականությունն ու երկրի ամբողջականությունը խաթարելու», «37 անգամ մարդ սպանելու» եւ «31 անգամ մահափորձ իրականացնելու» եւ եւս այլ 29 հանցանք իրագործելու մեջ: Մեղադրականում պահանջվել է վերոհիշյալ հանցագործությունների իրականացման համար 5-ից յուրաքանչյուրին դատապարտել 19.680-ական տարով:

Հատկանշական է, որ ԺԴԿ-ի անդամների նկատմամբ նույն մեղադրականը ներկայացվել էր նաեւ նրանց պատգամավորության տարիներին, որը սակայն հենց իրենց պաշտոնական դիրքի՝ անձեռնմխելիության պատճառով էլ ընթացք չէր ստացել: Հիշեցնենք, որ Սիրիայի Քոբանի քաղաքի ուղղությամբ «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման կողմից իրականացված հարձակումների դեմ իրենց բողոքն արտահայտելու համար 2014-ի հոկտեմբերի 6-ից 8-ը Թուրքիայում ցույցեր էին անցկացվել, ինչի հետեւանքով էլ ձերբակալվել էին մեծ թվով մարդիկ, այդ թվում՝ նաեւ կուսակցական գործիչներ:

ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄ

# ԱՐՑՈՒՆՔԱԲԵՐ ԳԱԶԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԳՈՐԾԸ

**ՀՀ ֆինչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ֆինչական երրորդ բաժնում շարունակվում է 2024թ. մայիսի 27-ին Երեւան քաղաքի Աբովյան-Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում «Տավուշը հանուն հայրենիքի» շարժման կողմից իրականացված անհնազանդության ակցիայի ժամանակ ծառայություն իրականացնող ոստիկանների նկատմամբ արցունքաբեր գազ կիրառելու եւ այդ կերպ վերջիններիս ծառայողական գործունեությանը խոչընդոտելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:**

Իրականացված քննչական եւ ապացուցողական գործողությունների արդյունքում պարզվել է, որ 2024 թվականի մայիսի 27-ին՝ ժամը 10:30-ի սահմաններում, Երեւան քաղաքի Աբովյան-Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկում մի շարք քաղաքացիներ իրականացրել են անհնազանդության ակցիաներ, որի ընթացքում արգելափակել են ճանապարհի երթեւեկելի հատվածը: Նշված վայրում ծառայություն իրականացնող ՀՀ ՆԳՆ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողներն ակցիայի մասնակիցներին՝ ճանապարհի երթեւեկելի հատվածը բացելու օրինական պահանջ են ներկայացրել, ինչը, սակայն, վերջիններիս կողմից չի կատարվել:

Այդ ժամանակ տվյալ տարածքում է գտնվել նաեւ Երեւան քաղաքի 54-ամյա բնակիչը, ով, քննության տվյալներով, չի հանդիսացել անհնազանդության գործողություններ կատարող:

Երբ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցը մոտեցել է անհնազանդության ակցիա իրականացնող քաղաքացիներին եւ ցանկացել իր օրինական ծառայողական գործունեության շրջանակում իրականացնել վարչական ձերբակալում, 54-ամյա տղամարդը, ոստիկանի օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու նպատակով, հանել է իր մոտ պահվող արցունքաբեր գազաբալոնը եւ այն փչել ոստիկանության ծառայողի դեմքին՝ վերջինիս առողջությանը պատճառելով վնաս՝ այդ կերպ բռնություն գործադրելով նրա նկատմամբ:

Նշված անձը տեղափոխվել է ոստիկանության բաժին, որտեղ, կատարված անձնական խուզարկությամբ վերջինիս մոտ հայտնաբերվել էր «Շոկ» գրառմամբ արցունքաբեր գազաբալոնը:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով:

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

Հիշեցնենք, որ Տավուշում սահմանագծման եւ սահմանազատման գործընթացի մասին որոշումից հետո բազմաթիվ քաղաքացիներ շտապել էին Կիրանց եւ Ոսկեպար: Մայիսի 4-ին տեղում ձեւավորված «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը, որը ղեկավարում են Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը, ում եկեղեցական սպասավորությունն այս պահին սառեցված է, «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գառնիկ Դանիելյանն ու քաղաքագետ Սուրեն Պետրոսյանը շարժվեցին դեպի Երեւան: Մայիսի 9-ին Երեւանում կայացած բազմահազարանոց հանրահավաքին հաջորդել են անհնազանդության ակցիաները, որոնց ընթացքում բազմաթիվ քաղաքացիներ են բերման ենթարկվում, նրանց նկատմամբ կիառվում է բռնություն:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

## ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ՎԱՃԱՌՔ՝ «ՏԵԼԵԳՐԱՄՈՎ»

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության, դրանում համացանցի կիրառման դեմ քրեաիրավական պայքարը շարունակվում է:

ՔԿ Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում բացահայտվել է նման հերթական՝ Երեւան քաղաքի 21-ամյա բնակչի կողմից իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցների շրջանառության դեպքը:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ 21-ամյա երիտասարդը, որոշելով եկամուտ վաստակել, իր բջջային հեռախոսում առկա «Տելեգրամ» բջջային հավելվածով կապ է հաստատել «L...» էջի օգտատիրոջ հետ եւ պայմանավորվել «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցով համալրված փաթեթները, յուրաքանչյուրը 10 ԱՄՆ դոլար վարձատրության դիմաց, տեղադրել Երեւան քաղաքի տարբեր հատվածներում:

Պայմանավորվածության համաձայն՝ 2024թ. մայիսին երիտասարդը Արարատի եւ Կոտայքի մարզերից ապօրինի ձեռք է բերել եւ պահել վերոնշյալ էջի օգտատիրոջ կողմից թողնված, ընդհանուր առանձնապես խոշոր չափի՝ 71.28 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցով համալրված 112 փաթեթ: Դրանցից 1-ը հայտնաբերվել է 2024թ. մայիսի 21-ին ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված՝ երիտասարդի անձնական խուզարկության, իսկ 111 փաթեթները՝ վերջինիս պատկանող «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայում կատարված խուզարկության արդյունքում:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝21-ամյա երիտասարդին մեղադրանք է ներկայացվել: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափի թմրամիջոցների ապօրինի շրջանառության գործում ներգրավված այլ անձանց ինքնությունը պարզելու, նրանց հայտնաբերելու ուղղությամբ:

## ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂԸ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ ՕԴԱԿԱՅԱՆՈՒՄ

Ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի քրեական հետախույզները մայիսի 29-ին Թբիլիսի-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո ձերբակալվել եւ գծային բաժին է տարվել 23-ամյա Անտոն Պ.-ն: Նա 2021 թ. դեկտեմբերի 30-ից Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքի իրավապահների կողմից հետախուզվում էր հասարակական կարգի կոպիտ խախտման կամ մասնակցության կազմակերպման մեղադրանքով:

Խափանման միջոցը՝ կալանք:

Հայտնաբերման մասին հայտնվել է հետախուզումը նախաձեռնողին եւ դատախազությանը:

ԲՈՏՑԱՆՑԵՐԻ ԴԵՄ

## ՕՆԼԱՅՆ ԳՈՒՄԱՐ ՇՈՐԹԵԼՈՒ ԴԵՊՔԵՐ

Հայաստանում եւ Ուկրաինայում ձերբակալվել է չորս մարդ, ավելի քան 100 ինտերնետային սերվեր անջատվել կամ խափանվել է հազարավոր մարդկանց վնաս պատճառած միջազգային կիբեռհանցագործության դեմ ուղղված խոշոր գործողության արդյունքում: Այս մասին գրում է Reuters-ը՝ Եվրոպոլին հղումով:

Գործողությունը, որն իրականացված մայիսի 27-ից 29-ն ընկած ժամանակահատվածում, Եվրամիության իրավապահ գործակալության կողմից որակվել է որպես «երբեւէ ամենամեծ գործողությունը բոտցանցերի դեմ, որոնք առանցքային դերակատարում ունեն գումարի շորթման ծրագրերի տեղակայման գործում»: Բոտցանցերը ներառում են IcedID-ն, Smokeloader-ը, SystemBC-ն, Pikabot-ը եւ Bumblebee-ն:

Ձերբակալություններից մեկը կատարվել է Հայաստանում, իսկ մյուս երեքը՝ Ուկրաինայում, հայտնում է Եվրոպոլը՝ հավելելով, որ ավելի քան 2000 դոմեն այժմ գտնվում է իրավապահների վերահսկողության տակ: Չարամիտ ծրագրերը թույլ են տալիս կիբեռհանցագործներին վատ նպատակներով գաղտնի միանալ մարդկանց համակարգիչներին: Ըստ քննիչների՝ գլխավոր կասկածյալներից մեկը կրիպտոարժույթով հափշտակել է առնվազն 69 միլիոն եվրո (75 միլիոն դոլար)՝ վարձակալելով հանցավոր ենթակառուցվածքի կայքեր՝գումարի շորթման ծրագրեր տեղադրելու համար:

Գործողությունը, որը կոչվել է «Վերջնախաղ», նախաձեռնել եւ ղեկավարել են Ֆրանսիան, Գերմանիան եւ Նիդերլանդները: Դրան մասնակցել է մի քանի այլ երկիր, այդ թվում՝ Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն եւ Ուկրաինան, ասվում է Եվրոպոլի հայտարարության մեջ:

«Միջազգային «Վերջնախաղ» գործողության միջոցով մեր քննչական մարմիններին հաջողվել է կիբեռհանցագործությանը հասցնել մինչ օրս ամենամեծ եւ ամենակարեւոր հարվածը», - ասվում է Գերմանիայի ներքին գործերի նախարար Նենսի Ֆեյզերի հայտարարության մեջ:

Ոստիկանության երկարատեւ հետաքննությունը խաթարել է ենթակառուցվածքը, «որից ամբողջ աշխարհում իրականացվում են գումարի շորթմամբ զանգվածային հարձակումները, որոնցում տվյալները հավաքվում են, ծածկագրվում, այնուհետեւ զոհերը շանտաժի են ենթարկվում», - ասել է Ֆեյզերը՝ հավելելով, որ նման հանցագործությունը զգալի տնտեսական վնաս է հասցրել Գերմանիային:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝մայիսի 29-ից 30-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 92 դեպք, որից 1-ը՝նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

## ՄՆԱՑԵԼ Է ԱՌԱՆՑ ԿԱՑԱՐԱՆԻ, ԳՈՒՅՔԻ

Մայիսի 26-ին վարարած Աղստեւը Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի միջնակարգ դպրոցի դիմաց՝ միջպետական ավտոճանապարհի եզրին, քշել-տարել է Նինա Մանուչարյանի, Մարիամ Ազիզբեկյանի տները: Ն. Մանուչարյանը այդտեղ ընտանիքով էր ապրում, իսկ Մարիամ Ազիզբեկյանը՝ միայնակ, վերջինիս տան ողջ գույքը, իր հագուստները գետը քշել է: Մարիամի բնակված տունը նախկինում պատկանել է Հաղարծնի բնակիչ Ալբերտ Հովհաննիսյանին. 10 տարի առաջ տեղի ունեցած ջրհեղեղից տունը դարձել է վթարային, պետության կողմից տան սեփականատիրոջը եւ գյուղի այլ բնակիչների դրամական փոխհատուցում է տրվել, վթարային այդ տները դարձել են պետության սեփականություն: Մարիամը տուն չուներ, ճարահատյալ ապրել է վթարային տանը: Նա ջրհեղեղից հետո՝ գիշերվա ժամը 2-ին, ապաստան է գտել համագյուղացի Նաիրա Գրիգորյանի տանը, ուր մինչ հիմա ապրում է: 34-ամյա Մարիամը ծագումով Դիլիջան քաղաքից է, 8 տարի առաջ ամուսնալուծվել է, երեխաներ չունի, ունի առողջական խնդիրներ: Նա հիմնական աշխատանք չունի, օրավարձով աշխատանքներ է կատարում: Ցանկանում է վագոն-տնակ ունենալ, որպեսզի փողոցում չմնա, սակայն դրա համար համար գումար չունի: 2023 թվականին գրավոր դիմել ենք Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանին՝հարցնելով, թե համայնքապետարանը ինչո՞ւ չի մաքրում Աղստեւի հունը: Համայնքապետը պատասխանել է, որ համայնքի 2023թ. բյուջեում այդ նպատակով գումարներ չեն նախատեսվել, 2024-ին « համապատասխան միջոցների առկայության դեպքում» գետի հունը մաքրելու համար ֆինանսներ կնախատեսվի: Աղստեւի հունը չմաքրած Դիլիջանի համայնքաետարանն ինչո՞վ կօգնի գետի վարարման հետեւանքով առանց կացարան, առանց գույքի մնացած Մ. Ազիզբեկյանին:

## ՃԱՆԱՊԱՐՀԸ ՓԱԿ Է

Կիրանց-Բաղանիս հատվածում սահմանազատումն ավարտվել է, այդ հատվածը սահմանապահներն են հսկում: Մայիսի 23-ից Ոսկեպար-Բաղանիս ավտոճանապարհը փակ է: Սահմանագոտուվ ձգվող ավտոճանապարհը ոստիկանների կողմից փակված է երկու կողմից՝ Բաղանիս գյուղի ծայրին եւ Ոսկեպարի Սուրբ Աստվածածին եկեղեցու մոտ: Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի այդ հատվածը ավտոմեքենաներն անցնում են Ոսկեպար-Բաղանիս շրջանցիկ ավտոճանապարհով: Բաղանիսի վարչական ղեկավար Գեւորգ Սահակյանը հայտնեց, որ սահմանամերձ ավտոճանապարհը փակ է մնում, քանի որ սահմանագոտում դեռ աշխատանքներ կան անելու, փշալար պիտի անցկացվի: Գ. Սահակյանին հարցրինք, թե որտե՞ղ է տեղափոխվում Բաղանիսում կուտակված կենցաղային աղբը: Նա ասաց, որ գյուղի կենցաղային աղբը առայժմ տեղափոխում են հարեւան գյուղերի աղբավայրեր, մինչեւ որ Բաղանիսի նոր աղբավայրի տեղ ընտրեն:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

## ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ ՊԻՏԻ ՍՈՎՈՐԵՆ

**Ոստիկանությունը եւս պետք է սովորի թե՛ էթիկայի, թե՛ վարքագծի, թե՛ բանակցային կանոններ ու հմտություններ տարբեր պրոցեսների շրջանակներում, բայց դա բնականաբար չի նշանակում, որ քաղաքացիները կարող են դրսեւորել ոչ իրավաչափ վարքագիծ:**

Այս մասին ԱԺ-ում 2023 թվականի ՄԻՊ բյուջեի կատարողականի քննարկման ժամանակ ասաց ՄԻՊ Անահիտ Մանասյանը:

Հանձնաժողովի նիստը վարող ՔՊ-ական պատգամավոր Ծովինար Վարդանյանը, դիմելով ՄԻՊ-ին նշեց, որ վերջին շրջանում որոշ քաղաքական խմբակների կողմից իրականացվող ակցիաների շրջանակում արձանագրվել են դեպքեր, երբ թիրախավորվել է անձը, ո՞վ է կրելու պատասխանատվություն:

«Ընդդիմությունը չի մասնակցում այս քննարկմանը, որը զարմանալի չէ: Թիրախավորվել է ոստիկանությունը, ցուցարարներից ոմանք բռնություն են կիրառում ոստիկանների նկատմամբ: Կա՞ն արդյոք օրենսդրական բացեր, ինչպե՞ս պաշտպանել սովորական քաղաքացիներին, ոստիկաններին», - հետաքրքրվեց նա:

Անահիտ Մանասյանն էլ նշեց, որ քաղաքական դաշտը հնարավորինս պետք է խտրական եւ ատելության խոսքից զերծ լինի:

«Ես ընդունում եմ, որ այսօրվա մեր ընդհանուր պրոցեսներն ընթանում են խտրական, ատելության խոսքի բոլոր հնարավոր դրսեւորումներով: Բոլոր քաղաքական ուժերը պետք է նկատի ունենան, որ ցանկացած գործընթացի շրջանակում իրենք եւս պատասխանատու են նշված խնդիրների առնչությամբ պատշաճ մոտեցում ցուցաբերելու համար»,- նշեց Մանասյանը:

Նրա խոսքով՝ շատ կարեւոր է ԱԺ պատգամավորների, տարբեր հանրային գործիչների դերակատարությունը:

«ԱԺ պատգամավորներն իրենք էլ պետք է ձեռնպահ մնան ատելության խոսքից, բայց նաեւ պետք է հակազդեն այդ խոսքին: Հատուկ պարտավորություն ունեն նաեւ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք:

Ես հատուկ շեշտադրեցի ԱԺ պատգամավորներին, որոնք պետք է պահպանեն էթիկայի վարքագծի կանոնները, դուք անդրադարձաք ոստիկանության ծառայողներին, որոնք ավելի զգայուն ու խոցելի են, բայց ես նշեմ, որ նրանք եւս հանրային ծառայություն են իրականացնում եւ նրանք եւս պետք է նկատի ունենան եւ պատրաստ լինեն տարբեր հանգամանքների: Ոստիկանությունը եւս պետք է սովորի թե՛ էթիկայի, թե՛ վարքագծի, թե՛ բանակցային կանոններ ու հմտություններ տարբեր պրոցեսների շրջանակներում, բայց դա բնականաբար չի նշանակում, որ քաղաքացիները կարող են դրսեւորել ոչ իրավաչափ վարքագիծ»,- ասաց նա:

*ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

ԼՈՒՐԵՐ

## ՄԱՐԶԻԿՆԵՐԸ 1 ՄԼՆ ԴՐԱՄ ՆՊԱՍՏ ԿՍՏԱՆԱՆ

Գործադիրի երեկվա նիստում որոշում է կայացվել Փարիզի 2024 թվականի Օլիմպիական խաղերի վարկանիշ ձեռք բերած մարզիկների ամսական սպորտային նպաստը սահմանել 1 մլն դրամ՝ 300 000 ՀՀ դրամի փոխարեն: Որոշումն ուժի մեջ է մտնելու 2024 թվականի հունիսի 1-ից:

Ներկայում օլիմպիական վարկանիշ ձեռք բերած 11 մարզիկների սպորտային նպաստի ամսական ֆոնդը կազմում է 5 մլն դրամ՝ ներառյալ հարկերը եւ տուրքերը: Հունիսի 1-ից նշված մարզիկների նպաստի վճարման համար նախատեսված պետական ֆոնդը կկազմի 13 մլն 750 հազար դրամ: Ծրագիրը կշարունակվի մինչեւ Օլիմպիական խաղերի ավարտը. երեք ամսվա համար անհրաժեշտ գումարը կկազմի 26 մլն 250 հազար ՀՀ դրամ:

Միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարկանիշային մրցաշարերը դեռեւս ընթացքի մեջ են, այն մարզիկները, որոնք Փարիզ-2024-ի ուղեգիր ձեռք կբերեն, բարձրացված նպաստը կստանան ուղեգիրը նվաճելու հաջորդ ամսվանից:

Փարիզի 2024 թվականի Օլիմպիական խաղերին մասնակցության վարկանիշ չունեցող եւ նպաստի շահառու հանդիսացող մարզիկներին նպաստը տրամադրվում է մինչեւ տվյալ մարզաձեւերի վարկանիշային մրցաշարերի ավարտի ամսաթվին հաջորդող ամսվա 1-ը, եթե նրանք վարկանիշ ձեռք չեն բերում:

Հիշեցնենք՝ Փարիզի 2024 թվականի Օլիմպիական խաղերի նախապատրաստական աշխատանքների շրջանակում վարկանիշային մրցաշարերին մասնակցելու նպատակով Օլիմպիական խաղերի, աշխարհի եւ Եվրոպայի առաջնությունների հաղթողները, մրցանակակիրները, ինչպես նաեւ Օլիմպիական խաղերում, աշխարհի առաջնություններում 4-8-րդ տեղը գրաված մարզիկները եւ օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձեւերի Հայաստանի հավաքական թիմերի մարզիչները, բժիշկներն ու մերսողները Կառավարության ծրագրով սպորտային նպաստ են ստանում:

Ծրագրի իրականացման համար ՀՀ 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված է շուրջ 297 մլն դրամ:

## ԱՎԱԳ ԴՊՐՈՑԸ՝ ՎԱՐԺԱՐԱՆ

Կառավարությունն իր երեկվա՝ մայիսի 30-ի նիստում որոշեց «Եղեգնաձորի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը վերանվանել «Եղեգնաձորի վարժարան» ՊՈԱԿ, ինչը հնարավորություն կտա 2024-2025 ուսումնական տարվանից դպրոցում իրականացնել 5-9-րդ դասարանների սովորողների ընդունելություն, որի արդյունքում Եղեգնաձորի համար 1 հիմնական եւ Հ. Հովհաննիսյանի անվան հ. 2 դպրոցները կբեռնաթափվեն:

Նշենք, որ Եղեգնաձորի ավագ դպրոցի շենքը կառուցվել է 1973 թվականին, 600 սովորողի համար նախագծային հզորությամբ: Շենքը եռահարկ է, ունի 1 մասնաշենք: Ներկա պահին դպրոցում սովորում է 221 աշակերտ. դպրոցը համարվում է թերբեռնված:

Եղեգնաձորի հ.1 հիմնական դպրոցի շենքը կառուցվել է 2023 թվականին՝ 600 սովորողի համար նախագծային հզորությամբ: Շենքն ունի 1 մասնաշենք: Այս պահի դրությամբ դպրոցում սովորում է 615 երեխա:

Եղեգնաձորի Հ. Հովհաննիսյանի անվան հ.2 հիմնական դպրոցի շենքը կառուցվել է 1962 թվականին՝ 480 սովորողի համար նախագծային հզորությամբ: Շենքը եռահարկ է: 2018 թվականին իրականացվել է ընթացիկ նորոգում: Այս պահի դրությամբ դպրոցում սովորում է 625 երեխա: Եղեգնաձոր քաղաքում գործող 2 հիմնական դպրոցները գերբեռնված են եւ աշխատում են երկու հերթով:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 15 պատահար. 30 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ First Fisher ԵՎ First Run ԽԱՂԵՐԸ

ftNFT ֆիջիթալ տարածքում տեղի է ունեցել թերեւս ամենից տարբերվող, հետաքրքիր, ուսուցողական ու ինտերակտիվ Fastex Meetup-ը:

Միջոցառման խոսնակը Fastex-ի գործառնությունների գծով տնօրեն Մհեր Թունյանն էր, որը մանրամասն ներկայացրեց արդեն իսկ մեծ հետաքրքրություն առաջացրած First Fisher եւ First Run խաղերը, որոնք գործում են Բահամուտ բլոկչեյնի վրա: Հանդիպման ընթացքում մասնակիցները հնարավորություն են ունեցել տեղում փորձարկել առաջարկվող խաղերը եւ ստանալ միավորներ:

Միջոցառման մասնակիցները կատարել են հատուկ առաջադրանքներ, որոնց արդյունքում ստացել են NFT-ներ եւ դրանց ֆիզիկական տարբերակը՝ բրենդավորված շապիկ: Խաղերի ընթացքում ձեռք բերված միավորներն էլ փոխարկվել են FTN-ի: Վազքուղու վրա 5-7 րոպեում 1կմ վազած մասնակիցներից յուրաքանչյուրին տրվել է 25 FTN-ի չափ Dzook Coin:

Հավելենք, որ առաջիկա հանդիպումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար անհրաժեշտ է հետեւել Fastex-ին սոցիալական հայտնի հարթակներում:

## ՔԱՐԿՈՓՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՋՐԱԾԱԾԿ Է

Քարկոփ գյուղն ամբողջությամբ ջրածածկ է, շուրջ 7 բնակավայրեր կապ չունեն Ալավերդի քաղաքի հետ:

Մայիսի 25 եւ մայիսի 26-ին Լոռու եւ Տավուշի մարզերում առաջացած աղետի հետեւանքով ամենամեծ վնասը հասցրել է Դեբեդ գետը:

Այս մասին երեկ կառավարության նիստի ընթացքում նշել է ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանը:

Նրա խոսքով՝ աղետի օրը գետում 6 անգամ ավելի ջուր է եղել, ինչի հետեւանքով այն վարարել է:

«Փրկարար ծառայությունը մեծ ուժով ներգրավվել է 456 փրկարար ծառայողների, որոնք տարհանել են 443 մարդկանց, հիմա Սանահին Կայարան թաղամասում է, որ կա 143 անձ, որոնք գետի այլ ափում են, նրանց անհրաժեշտ պարագաները հասնում են պարանի միջոցով: Կան հսկայական վնասված ենթակառուցվածքներ, 2 կմ է հասնում տարբեր հատվածների վնասվածքները: Երկու կմ հատվածից վնասված են ենթակայաններ, սյուներ, հարակից ենթակառուցվածքներ, բավական երկար ժամանակ կպահանջվի երկաթուղու վերականգնամ համար», - ասել է նա:

Նախարարի խոսքով՝ կան տարբեր նշանակության 20 վնասված կամուրջներ: Հատկապես Ախթալայի եւ Քարկոփի կամուրջների վնասվածքների պատճառով շուրջ 7 բնակավայրեր կապ չունեն Ալավերդի քաղաքի հետ: Ջրային հատվածներում կան լուրջ վնասվածքներ, ընդհանուր չափը դեռեւս գնահատել հնարավոր չէ: Նախարարը կարեւորեց, որ հիմա անհրաժեշտ է բոլոր գերատեսչությունների ներգրավվածությունը, կարիք կա մշակելու աջակցության ծրագրեր, հասկանալ, թե փոխհատուցման ծրագրերը ինչպես պետք է իրականացնել:

ՍՏԱՐՏԱՓՆԵՐ 4

# ԱՆՑԵԼ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՒԼԸ

**Հայաստանի Ամերիկյան Համալսարանի (ՀԱՀ) Ձեռներեցության եւ նորարարական տեխնոլոգիաների կենտրոնը (EPIC)՝ որպես Հայաստանում ձեռներեցության աշխարհի գավաթի (EWC) ազգային կազմակերպիչ, շնորհավորել է EWC Armenia 2024-ի ազգային հաղթող դարձած երեք ստարտափներին, որոնք անցել են միջազգային փուլ՝ ներկայացնելու Հայաստանը:**

2019 թվականից ի վեր EWC-ն վերածվել է աշխարհի ամենամեծ եւ ամենատարբեր ստարտափ մրցույթների եւ աջակցության ծրագրերի հարթակի: EWC-ին ամեն տարի մասնակցում են 370 000 ձեռներեցներ ավելի քան 200 երկրներից: Մրցույթի հաղթողները ստանում են 1 միլիոն դոլար դրամական մրցանակ եւ այլ հնարավորություններ՝ վերապատրաստումներ, մենթորություն ստարտափի զարգացման բոլոր փուլերում, ինչպես նաեւ նեթվորքինգ:

Այս տարվա EWC Հայաստանի ազգային եզրափակիչը իսկապես նորարարության եւ ձեռներեցության տոն էր. տեխնոլոգիական էկոհամակարգի տարբեր ուղղություններ ներկայացնող մասնագետներ հավաքվել էին լսելու մրցույթի տասը հայկական առաջատար ստարտափների ելույթները եւ տեսնելու, թե որ երեք թիմերը կանցնեն EWC 2024 Global Finals:

Ազգային ժյուրիի որոշմամբ մրցող 10 ստարտափներից հաղթող ճանաչվեցին Archestr-ը, Maquaponics-ը եւ Nomiq-ը, որոնք կմիանան EWC Top 250 ստարտափներին եւ կմասնակցեն GEN-ի (Համաշխարհային ձեռներեցության ցանց) վիրտուալ bootcamp-ին՝ նախապատրաստվելու գլոբալ եզրափակչին:

Ըստ EWC Հայաստանի ազգային կազմակերպիչ Նժդեհ Հովհաննեսյանի՝ EWC մրցույթում տարեցտարի ավելի բազմազան եւ հետաքրքիր են դառնում գաղափարները:

Ազգային եզրափակչի ժյուրիի կազմում էին բարձր տեխնոլոգիական արդյունաբերության փոխնախարար Ռուբեն Սիմոնյանը, Գիտության եւ տեխնոլոգիաների զարգացման ազգային խորհրդի գործադիր խորհրդի անդամ, UC Berkeley, SkyDeck գլխավոր խորհրդական Կարեն Գյուլբուդաղյանը, Formula VC-ի անդամ, BANA Angels-ի նախագահ Գրիգոր Հովհաննիսյանը, EPAM Երեւանի տնօրեն Բենիամին Գյուրջյանը, ինչպես նաեւ «Այբ» հիմնադրամի խորհրդի նախագահ Արամ Փախչանյանը:

Բացի գլխավոր մրցանակներից միջոցառման ընթացքում հատուկ մրցանակներ հանձնվեցին նաեւ FAST հիմնադրամի եւ STAN-ի, ինչպես նաեւ Rooqet & InnWork-ի ու Team Telecom Armenia-ի կողմից:

Մրցույթի ազգային փուլն արդեն երրորդ տարին անընդմեջ անցկացվում է Team Telecom Armenia-ի աջակցությամբ: Ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը՝ որպես տեխնոլոգիական գործընկեր, մրցանակներ հանձնեց հաղթող երեք թիմերի անդամներին եւ կարեւորելով ստարտափների դերը նշեց. - «Հաղթողներից առաջին թիմը Archestr-ն էր՝ միակը «early stage»-ում: Archestr-ը SaaS հարթակ է, որը հեշտացնում է նախագծումից մինչեւ շինարարություն գործընթացը՝ ընդլայնելով աշխատանքային հոսքերը շենքերի դիզայներների, ընդհանուր մատակարարների համար: Նրանք արդեն ունեն վճարող օգտատերերի բազա եւ հաճախորդներ աշխարհի տարբեր անկյուններից:

Հաջորդը MAquaponics-ն էր: Նրանք նախագծում եւ տեղադրում են համակարգեր, որոնք կենդանիների գոմաղբը վերածում են օրգանական պարարտանյութի: Սննդանյութերով հարուստ պարարտանյութերը հարմար են հիդրոպոնիկ տեղակայման, կաթիլային ոռոգման եւ ավանդական գյուղատնտեսության համար:

Համահիմնադիր եւ Ponic Systems-ի ինժեներ Մելինե Բիլբուլը նշում է, որ այս հաղթանակը վերահաստատում է իրենց աշխատանքի նշանակությունը Հայաստանի ապագայի եւ կանաչ գյուղատնտեսության ավելի լայն ոլորտի համար: «Դա մեզ դրդում է շարունակել առաջընթացը եւ մեր ջանքերը ավելացնել մրցույթի հաջորդ փուլում՝ օգնելով մեզ բարձրացնել մեր ստարտափն ավելի մեծ բարձունքների»:

Ի վերջո, երրորդ հաղթողը Nomiq-ն էր՝ վեբ-ի վրա հիմնված քիչ կոդով հարթակ backend-ի մշակման համար: Այս ստարտափը հեղափոխում է ծախսերի օպտիմիզացումը եւ արագացնում բարդ լուծումների շուկա դուրս գալու ժամանակը՝ ավտոմատացնելով կոդերի ստեղծումը եւ հնարավորություն տալով արագ փոխակերպում գաղափարից հավելված:

EWC-ն այս տարվա մրցույթի համար ստացել էր շուրջ 60 հայտ, որոնցից միայն 10-ին հաջողվեց GEN-ի միջազգային ժյուրիի ընտրության փուլն ու հասնել ազգային եզրափակիչ:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՇԱՆՈՒՑՈՒՄ 4

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Շենգավիթ, Շիրակի փողոց, 4-րդ նրբանցք, 7ա շենք, 21 հասցեում գտնվող 78,2 քմ բնակարան եւ 5,7 քմ ինքնակամ շինություն: Լոտի մեկնարկային գինը՝ 28100000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 17.06.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 17.07.2024թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերի բաց աճուրդը.

- Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Չկալովի փողոց, 6/4 հասցեում գտնվող 265,4 ք.մ. բնակելի տուն, 156,14 քմ բնակելի տուն, 3,61 քմ /6,49 խմ/ պարիսպ եւ 0,039595 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 21003911 ՀՀ դրամ:

- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., Սունդուկյան փողոց, 28 հասցեում գտնվող 153,08 քմ բնակելի տուն, 16,44 քմ աստիճանահարթակ, 1,44 քմ աստիճաններ եւ 0,08887 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 7254325 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 17.06.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 17.07.2024թ.-ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքերը:

*«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՄԵԿՆԱՐԿԵՑ ՖԻԼՄԵՐԻ ՓԱՌԱՏՈՆԸ

**Ռեժիսոր Բալոժիի «Օմեն» կինոնկարի ցուցադրությամբ մայիսի 29-ին Երեւանում՝ Կինոյի տանը, ազդարարվեց Եվրոպական ֆիլմերի փառատոնի մեկնարկը:**

ՀՀ-ում ԵՄ պատվիրակության ղեկավար Վասիլիս Մարագոսը փառատոնը յուրահատուկ միջոցառում անվանեց՝ ընդգծելով, որ կինոն մշակութային երկխոսության զարգացման լավագույն գործիքներից է:

«Եվրոպական Միության նշանաբանն է՝ «Միավորված ենք բազմազանությամբ», ուստի փառատոնին ներկայանում ենք ԵՄ տարբեր երկրների 23 տարբեր ժանրերի ֆիլմերով: Հատկանշականն այն է, որ փառատոնի փակմանը ցուցադրելու ենք հայ-լիտվական համատեղ արտադրության «Ավրորայի լուսաբացը» կինոնկարը, իսկ փառատոնային օրերին կարող եք դիտել նաեւ ուկրաինական ֆիլմ, որն անդրադառնում է այն իրավիճակին, որում երկիրը հայտնվել է ռուսական ագրեսիայի հետեւանքով: Ցուցադրություններից զատ՝ փառատոնի շրջանակում կազմակերպվելու են աշխատարաններ, հանդիպումներ, քննարկումներ փորձագետների մասնակցությամբ»,-նշեց դեսպանը՝ շնորհակալություն հայտնելով Կինոյի տանը երկրորդ անգամ իրենց հյուրընկալելու համար:

Նա հավաստիացրեց, որ ֆիլմերը գեղեցիկ են, հետաքրքիր են, ուստի կինոյի երկրպագուները կարող են գալ եւ վայելել եվրոպական ավանդույթները ներկայացնող կինոնկարները:

Հայաստանում Բելգիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Էրիկ դե Մույնքն անդրադարձավ բացման ֆիլմին, որը բելգիական է եւ նշեց՝ այն յուրահատուկ է ու հետաքրքիր մանրամասներ է ներկայացնում մի սիրված երաժշտի մասին, անդրադառնում բազմազանության թեմային: «Այն մրցանակի է արժանացել Կաննի, Մյունխենի կինոփառատոններում եւ ներկայացվելու է «Օսկար»-ի: Ռեժիսոր Բալոժին երկար տարիներ երազել է այդ ֆիլմը նկարահանել: Ունենալով շատ փոքր բյուջե՝ կարողացել է նկարահանել այն՝ 23 օր անցկացնելով Աֆրիկայում»,-տեղեկացրեց դեսպանն ու հավելեց՝ ֆիլմի հաջողությունը կարող է ուղերձ լինել հայ ստեղծագործողներին, որ երբեք չհանձնվեն ու չվախենան առաջ գնալ, պայքարեն երազանքների համար:

Փառատոնը համագործակցել է ՅՈՒՆԻՔ Հայաստանի հետ, որի ներկայացուցիչ Յան-Թագե Քյուլինգի խոսքով՝ ՅՈՒՆԻՔ-ը հնարավորություն է տալիս արժեքները գործողության մեջ տեսնել, այն պետությունների, մարդկանց համագործակցություն է ընդհանուր արժեքների շուրջ: «Ինձ համար մշակույթին, արվեստագետներին աջակցելը, պատմություններ պատմելը, միմյանց լսելն ու միմյանցից սովորելը երբեմն բարդ է: Անդամ պետությունների հետ քննարկումներ ենք անցկացնում, երբեմն բանավիճում, սակայն գալիս ենք այն եզրակացության, որ կարեւորը կամուրջներ կառուցելն է, ուստի ուրախ եմ, որ կարող ենք համագործակցել փառատոնի հետ», - նշեց նա:

Փառատոնի ֆիլմերի ծրագրի համակարգող Վարվառա Հովհաննիսյանը կարծում է Եվրոպական ֆիլմերի փառատոնը հանդիսատեսի ամենասիրած միջոցառումներից է, որովհետեւ այն բացառիկ հնարավորություն է տալիս երեւանյան մեծ էկրանին դիտել ֆիլմեր, որոնք հաճախ չեն ցուցադրվում: «Այս տարի մեծ աշխատանք ենք տարել Եվրամիության պատվիրակության հետ 23 ֆիլմ ներկայացնելու համար, ինչը բացառիկ թիվ է, երբեք այդքան ֆիլմ չի ցուցադրվել: Ամեն ֆիլմ աննկարագրելի արժեք ունի, ներկայացնում ենք տվյալ երկրի այս կամ նախորդ տարվա լավագույն ֆիլմերը: Ցուցադրելու ենք այնպիսի կինոռեժիսորների ֆիլմեր, ինչպիսիք են Ռադու Ժուդեն, Մաթիաս Գլասները, որոնք եվրոպական կինոյի հնչեղ անուններ են եւ նրանց աշխատանքները միշտ ընդգրկվում են միջազգային կինոփառատոնների մրցութային ծրագրերում», - շեշտեց Հովհաննիսյանը:

Փառատոնում ընդգրկված են ֆիլմեր Բելգիայից, Պորտուգալիայից, Լատվիայից, Լիտվայից, Էստոնիայից, Լեհաստանից, Ֆրանսիայից, Չեխիայից, Գերմանիայից, Սլովակիայից, Շվեդիայից, Իսպանիայից, Ռումինիայից, Բուլղարիայից, Իտալիայից, Կիպրոսից, Հունաստանից, Նիդերլանդներից, Ուկրաինայից, Ֆինլանդիայից, Դանիայից եւ Հայաստանից:

Ֆիլմերի ցուցադրությունը բացառիկ հնարավորություն է՝ ծանոթանալու եվրոպական կինոյին եւ այն կարեւոր գաղափարներին, որոնք հեղինակները փորձել են փոխանցել ֆիլմերի միջոցով: Մի շարք հետաքրքիր ֆիլմերի կողքին փառատոնին կցուցադրվեն Մարկ դի Դոմենիկոյի եւ Շառլ Ազնավուրի «Ազնավուրը ըստ Ազնավուրի» կինոնկարները, որը հատուկ է ընտրվել, քանի որ այս տարի նշվում է մեծն շանսոնիեի 100-ամյա հոբելյանը:

Փառատոնն անցկացնում է Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունը «Եվրոպայի օր» տոնակատարությունների շրջանակում:

*ՀՈՒՐԻ ԲԱԴԱՍՍԱՐՅԱՆ*

ՄԱՐԶԱԿԱՆ

## ՀԱՂԹԱՆԱԿՈՎ Է ՄԵԿՆԱՐԿԵԼ ՄՐՑԱՇԱՐԸ

Հայաստանի բռնցքամարտի հավաքականի անդամ, Եվրոպայի առաջնության փոխչեմպիոն Նարեկ Մանասյանը հաղթանակով մեկնարկեց օլիմպիական վարկանիշային մրցաշարում:

Թաիլանդում ընթացող Փարիզի Օլիմպիական խաղերի համար վարկանիշային մրցաշարում 92 կգ քաշային կարգի առաջին մենամարտում Նարեկ Մանասյանն առավելության հասավ Հյուսիսային Մակեդոնիան ներկայացնող մարզիկի նկատմամբ: Մանասյանի հաջորդ մենամարտը նախատեսված է մայիսի 31-ին:

Ավելի վաղ՝ հերթական հաղթանակից հետո, քառորդ եզրափակիչ էր դուրս եկել 80 կգ քաշային Ռաֆայել Հովհաննիսյանը:

Միջազգային օլիմպիական կոմիտեի հովանու ներքո անցկացվող մրցաշարը վերջինն է, որտեղ բռնցքամարտիկները կկարողանան ուղեգիր նվաճել Փարիզի 33-րդ ամառային Օլիմպիական խաղերի համար: Հայաստանի դեռեւս ոչ մի ուղեգիր չի նվաճել բռնցքամարտում:

## «ՕԼԻՄՊԻԱԿՈՍԸ»՝ ԳԱՎԱԹԱԿԻՐ

Հունաստանի մայրաքաղաք Աթենքում տեղի ունեցավ ֆուտբոլի Կոնֆերենցիաների լիգայի եզրափակիչը: Տիտղոսը վիճարկեցին հունական «Օլիմպիակոսն» ու իտալական «Ֆիորենտինան»: Նվազագույն հաշվով հաղթեց հունական թիմը:

Հիմնական ժամանակն ավարտվեց ոչ ոքի՝ 0:0:

Միակ գոլը 116-րդ րոպեին խփեց «Օլիմպիակոսի» մարոկկացի հարձակվող Այուբ էլ Կաաբին, որը 11 գոլով դարձավ մրցաշարի լավագույն ռմբարկուն:

«Օլիմպիակոսն» առաջին եվրագավաթային տիտղոսը նվաճեց ակումբի պատմության մեջ, նաեւ առաջին հունական թիմն է, որին հաջողվում է եվրագավաթ նվաճել:

«Ֆիորենտինան» երկրորդ տարին անընդմեջ պարտվեց Կոնֆերենցիաների լիգայի եզրափակիչում:

Անցած տարի իտալական թիմը 1:2 հաշվով պարտվել էր անգլիական «Վեստ Հեմին»:

## ՔԱՌՈՐԴ ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ Է

Հայաստանի բռնցքամարտի տղամարդկանց թիմի անդամ Ռաֆայել Հովհաննիսյանը հերթական հաղթանակն է տոնել օլիմպիական վարկանիշային մրցաշարում:

Թաիլանդում ընթացող վարկանիշային մրցաշարի 80 կգ քաշային կարգում Ռաֆայել Հովհաննիսյանը գերազանցեց Ճապոնիայի ներկայացուցչին եւ դուրս եկավ վարկանիշային մրցաշարի քառորդ եզրափակիչ:

Մինչ այս պայքարից դուրս են մնացել Գուրգեն Մադոյանը, Արթուր Բազեյանը եւ Նարեկ Հովհաննիսյանը:

Միջազգային օլիմպիական կոմիտեի հովանու ներքո անցկացվող մրցաշարը վերջինն է, որտեղ բռնցքամարտիկները կկարողանան ուղեգիր նվաճել Փարիզի 33-րդ ամառային Օլիմպիական խաղերի համար: Հայաստանի դեռեւս ոչ մի ուղեգիր չի նվաճել բռնցքամարտում:

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ

# ՀԱՂԹՈՂՆԵՐԸ ԿՀԱՅՏԱՐԱՐՎԵՆ ՀՈՒՆԻՍԻ 1-ԻՆ

**«Խաղաղություն» մանկապատանեկան նկարչական մրցույթ-ցուցահանդեսի հաղթողների անունները կհայտարարվեն հունիսի 1-ին:**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ «Արհեստագործների միություն» մշակութային հիմնադրամը 2024 թվականի ապրիլ-հունիսին իրականացնում է «Խաղաղություն» մանկապատանեկան նկարչական մրցույթ-ցուցահանդեսը:

Մրցույթ-ցուցահանդեսը միտված է մշակութային կրթության ոլորտում, մասնավորապես՝ կերպարվեստի բնագավառում, շնորհալի երեխաների բացահայտմանը, նրանց ստեղծագործական ունակությունների զարգացմանն ու ինքնադրսեւորմանը, ինչպես նաեւ համապատասխան միջավայրի ստեղծմանը՝ հետագայում հայկական մանկապատանեկան կերպարվեստի ոլորտը ներկայացնելու միջազգային հեղինակավոր հարթակներում:

Մրցույթի ամփոփիչ ցուցահանդեսը, հաղթողների հայտարարման եւ պարգեւատրման արարողությունը կկայանան ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի մշակույթի տանը հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրը:

● *Հունիսի 2-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում տեղի կունենա «Զավեշտալի կատակերգություն հյուրանոցում» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-3000 դրամ:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

*Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Քուժհասատությունը գումար է պահանջում, բայց ես փող չունեմ: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:**
*Մայիս Մարգարյան (64 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Պետության կողմից անվճար բուժօգնություն տրամադրվում է առաջնային բուժօգնության դեպքում, եւ երբ այդ բուժօգնությունն ընդգրկված է պետական ծրագրերի մեջ՝ որպես պետության կողմից փոխհատուցվող բժշկական օգնության տեսակ: Անվճար բուժօգնության դեպքում բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաեւ բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալիս յուրաքանչյուր անձ իրավունք ունի ընտրել բժշկական հաստատությունը եւ իր բժշկին, ստանալ բժշկական օգնություն եւ սպասարկում հիգիենայի պահանջներին համապատասխանող պայմաններում, պահանջել եւ ստանալ իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման եւ բուժման ընթացքի մասին տեղեկություններ, պահանջել դրանց գաղտնիության ապահովում, իրազեկ լինել իր հիվանդության մասին եւ համաձայնություն տալ իրեն բուժելու հարցում, արժանանալ հարգալից վերաբերմունքի:

*ՀՀ առողջապահության նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Յուրաքանչյուր ոք, անկախ իր գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու իրավունք: Այս իրավունքը ներառում է անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալը պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում: Այնուամենայնիվ, պետք է իմանալ, որ Հայաստանի Հանրապետությունում, օրենքով սահմանված կարգով, անվճար բուժօգնությունը սահմանվում է հատուկ խմբերի համար, ինչպես նաեւ հատուկ դեպքերում:

## ԻՐԱՎՈՒՆՔ

**ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե որքան եմ պարտք բանկին, բայց ինձ ուղղորդում են իրավաբանների մոտ: Ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:**
*Սեդա Հայրապետյան (21 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Նման դեպքում կարող եք հետեւել բանկի տվյալ աշխատակցի ուղղորդմանը եւ այցելել այն բանկ, որտեղ առկա են Ձեր պարտավորությունների վերաբերյալ ամբողջական տվյալներ: Եթե բանկից առհասարակ հրաժարվում են Ձեր պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել, ապա կարող եք ձեռնարկել հետեւյալ քայլերից որեւէ մեկը՝

-դիմել ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ՝ ներկայացնելով Ձեր խնդիրը բանկի հետ, եւ խնդրել նրանց միջամտությունը: Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի ծառայություններն անվճար են:

-Այցելել «ԱՌՔԱ» վարկային բյուրոյի կայքը եւ գրանցվել կայքում: Կայքում գրանցվելուց հետո Դուք հնարավորություն կստանաք ցանկացած պահի մուտք գործել կայքում բացված Ձեր անձնական էջ եւ ստանալ ամբողջական տեղեկատվություն Ձեր վարկային պատմության վերաբերյալ:

*ՀՀ կենտրոնական բանկ*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Քաղաքացու՝ բանկի նկատմամբ ունեցած ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է հասանելի լինել ոչ բոլոր մասնաճյուղերում, կամ ոչ բոլոր մասնաճյուղերի աշխատակիցները կարող են հասանելիություն ունենալ տվյալների այդ բազային, այդ պատճառով բանկի տվյալ մասնաճյուղի աշխատակիցը կարող է Ձեզ ուղղորդել այն մասնաճյուղ կամ այն աշխատակցի մոտ, որը տիրապետում է այդ տեղեկություններին կամ հասանելիություն ունի տվյալների համակարգին:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

«Լիբրա գրուպ»-ի գործադիր տնօրեն Ջորջ Լոգոթեթիսի գլխավորած պատվիրակությունը մայիսի 30-ին այցելել է Հայոց ցեղասպանության հուշահամալիր: Հյուրերը շրջել են նաեւ Հայոց ցեղասպանության թանգարանում, ծանոթացել մշտական եւ ժամանակավոր ցուցադրություններին, որից հետո Ջորջ Լոգոթեթիսը գրառում է կատարել Պատվավոր հյուրերի հուշամատյանում:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Շիրակ | +2 + 6<br>+14 + 18 |
| Կոտայքի լեռներ | +2 + 6<br>+13 + 16 |
| Կոտայքի նախալեռներ | +8 + 11<br>+19 + 21 |
| Գեղարքունիք | +2 + 5<br>+13 + 17 |
| Լոռի | +3 + 5<br>+13 + 16 |
| Տավուշ | +7 + 10<br>+17 + 19 |
| Արագածոտնի լեռներ | +2 + 4<br>+12 + 14 |
| Արագածոտնի նախալեռներ | +7 + 11<br>+19 + 23 |

| | |
|---|---|
| Արարատ | +9 + 12<br>+22 + 24 |
| Արմավիր | +8 + 11<br>+22 + 24 |
| Վայոց ձորի լեռներ | +2 + 5<br>+13 + 15 |
| Վայոց ձորի նախալեռներ | +9 + 11<br>+22 + 24 |
| Սյունիքի հովիտներ | +8 + 12<br>+18 + 21 |
| Սյունիքի նախալեռներ | +4 + 8<br>+14 + 17 |
| ԼՂՀ | +5 + 9<br>+14 + 16 |
| Երեւան | +16 + 18<br>+21 + 23 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **30.5.2024**
Հասցեն՝ Գերադրքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*